

**Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1998 թվականի հունվարի 27-ի 98/11/ԵՏՀ հրահանգը կենցաղային լամպերի էներգիայի սպառման տվյալների վերաբերյալ**

**(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

**Պաշտոնական տեղեկագիր L 071, 10.03.1998թ., էջ 0001 - 0008**

Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող Հանձնաժողովի 1998 թվականի հունվարի 27-ի 98/11/ԵՏՀ հրահանգը կենցաղային լամպերի էներգապիտակավորման վերաբերյալ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

Հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

Հաշվի առնելով «Կենցաղային տեխնիկայի կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը, մասնավորապես դրա 9 և 12-րդ հոդվածները,

քանի որ 92/75/ԵՏՀ հրահանգի համաձայն, Հանձնաժողովը պետք է կիրարկող հրահանգներ ընդունի կենցաղային տեխնիկայի վերաբերյալ, ներառյալ լուսավորման աղբյուրները (լամպեր),

քանի որ լամպերի կողմից էլեկտրականության օգտագործումը կազմում է Համայնքի ամբողջ էլեկտրականության պահանջարկի նշանակալից մասը, քանի որ լամպերի կողմից օգտագործվող կրճատված էներգիայի ծավալը շատ կարևոր է,

քանի որ Համայնքը, հաստատելով իր հետաքրքրությունը միջազգային ստանդարտացման համակարգի նկատմամբ, որն ընդունակ է ստանդարտներ մշակել, որոնք փաստացի օգտագործվում են միջազգային առևտրի բոլոր գործընկերների կողմից և բավարարում են Համայնքի պահանջները, հորդորում է Եվրոպական ստանդարտացման կազմակերպություններին շարունակել իրենց համագործակցությունը միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ,

քանի որ Ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵՆ) և էլեկտրատեխնիկական ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵՆԷլԵԿ) մարմիններ են, որոնք իրավասու են ներդաշնակեցված ստանդարտներ ընդունել Հանձնաժողովի և այս երկու մարմինների միջև 1984 թվականի նոյեմբերի 13-ին ստորագրված համագործակցության ընդհանուր ուղեցույցի համաձայն, քանի որ սույն Հրահանգի համաձայն ներդաշնակեցված ստանդարտը տեխնիկական մասնագիր է (Եվրոպական ստանդարտների կամ ներդաշնակեցման փաստաթուղթ), որն ընդունված է ՍԵՆԷլԵԿի կողմից, Հանձնաժողովի պարտականությունների շրջանակի (մանդատի) հիման վրա՝ համաձայն Խորհրդի 1983 թվականի մարտի 28-ի 83/189/ԵՏՀ հրահանգի, որը սահմանում է վերջին անգամ Հանձնաժողովի 96/139/ԵՀ (3) որոշմամբ փոփոխված և ընդհանուր ուղեցույցի հիման վրա գործող տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի (2) վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգը, Քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը:

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

#### *Հոդված 1*

1. Սույն Հրահանգը վերաբերում է կենցաղային էլեկտրական լամպերին, որոնք էլեկտրական հոսանք են ստանում մագիստրալային /գլխավոր/ կաբելից (շիկացած և կոմպակտ ֆլուորեսցենտային լամպեր) և կենցաղային ֆլուորեսցենտային լամպերին (ներառյալ գծային և non-integral կոմպակտ ֆլուորեսցենտային լամպեր),

Երբ սարքը վերջնական սպառողների կողմից կարող է մասերի բաժանվել, սույն Հրահանգի նպատակներից ելնելով «լամպ» նշանակում է այն մասը (մասերը), որը լույս է արձակում:

2. Ստորև նշված լամպերը չեն ներառվում սույն Հրահանգի գործողության ոլորտում

(ա) լամպերը, որոնց լուսային հոսքը գերազանցում է 6500 լյումենը,

(բ) այն լամպերը, որոնց մուտքային հզորությունը 4 վատտից քիչ է,

(գ) ռեֆլեկտոր լամպեր,

(դ) այն լամպերը, որոնք վաճառվում են և եկամտաբեր են հիմնականում էներգիայի այլ աղբյուրներ օգտագործելու պատճառով, ինչպիսին են մարտկոցները,

(ե) այն լամպերը, որոնք չեն վաճառվում և եկամտաբեր չեն զուտ տեսանելի չափով լույս արձակելու համար (400–ից 800 նմ),

(զ) այն լամպերը, որոնք վաճառվում են և եկամտաբեր են որպես արտադրատեսակի մաս, որի առաջնային նպատակը լուսարձակումը չէ: Սակայն այն դեպքում, երբ լամպն առաջարկվում է վաճառքի համար, վարձով կամ տարաժամկետ վաճառքի կամ առանձին է ցուցադրվում, օրինակ որպես մաս, այն պետք է ներառվի:

3. 2–րդ պարբերությունում նշված լամպերի դեպքում պիտակները և մանրապատճեն կարող են ներկայացվել սույն Հրահանգի համաձայն՝ պայմանով, որ ներդաշնակեցված չափման չափորոշիչները, որոնք կարող են կիրառվել այս լամպերի դեպքում ընդունվել են և հրապարակվել 4–րդ պարբերության համաձայն:

4. Սույն Հրահանգով պահանջվող տեղեկությունը տրամադրվում է ներդաշնակեցված չափորոշիչների համաձայն, որոնց գրանցման համարները հրապարակվել են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում և որոնց համար անդամ պետությունները հրապարակել են ազգային չափորոշիչների գրանցման համարները՝ փոխակերպելով ներդաշնակեցված չափորոշիչները:

5. 4–րդ պարբերությունում նշված ներդաշնակեցված չափորոշիչները սահմանվում են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում՝ 83/189/ԵՏՀ Հրահանգի համաձայն:

6. Սույն Հրահանգում օգտագործվող արտահայտություններն ունեն 92/75/ԵՏՀ հրահանգում նշված միևնույն իմաստը, բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստն այլ կերպ է պահանջում:

## Հոդված 2

1. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(3) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝

ա) մատակարարի անունը, ապրանքանիշը և հասցեն,

բ) Լամպի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն տարբերակելու համար,

(գ) տեղեկատվությունը, ներառյալ համապատասխան սխեմաները, մոդելի նախագծման հիմնական հատկանիշների վերաբերյալ և մասնավորապես այն հատվածների, որոնք բավականին մեծ ազդեցություն ունեն էներգասպառման վրա,

(դ) Մոդելի համապատասխան չափման փորձաստուգման հաշվետվությունները, որոնք իրականացվել են 1(4) հոդվածում նշված ներդաշնակեցված չափորոշիչների փորձաստուգման ընթացակարգերի համաձայն,

ե) շահագործման ցուցումներ, առկայության դեպքում:

2. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված պիտակը պետք է համապատասխանի սույն Հրահանգի I հավելվածում նշված նկարագրությանը: Պիտակը տեղադրվում է կամ տպագրվում է կամ կցվում է յուրաքանչյուր լամպի փաթեթավորման վրա: Յուրաքանչյուր լամպի փաթեթավորման վրա տեղադրված կամ տպագրված ոչինչ չպետք է այն փակի կամ ավելի քիչ տեսանելի դարձնի: I Հավելվածը հստակեցնում է, թե ինչպես պետք է պիտակը տեղադրվի շատ փոքր փաթեթավորման դեպքում:

3. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված մանրապատճեն համապատասխանում է սույն Հրահանգի II հավելվածում նշված նկարագրությանը:

4. 92/75/ԵՏՀ հրահանգի 5-րդ հոդվածում նշված հանգամանքների դեպքում և երբ վաճառքի, վարձակալության կամ տարածամկետ վաճառքի մասին առաջարկը նշվում է տպագիր կերպով, օրինակ կատալոգում, այդ տպագիր նյութը պետք է պարունակի սույն Հրահանգի III հավելվածում նշված ողջ տեղեկատվությունը:

5. Լամպի էներգասարդյունավետության աստիճանը, ինչպես նշված է պիտակում և մանրապատճենում, որոշվում է IV հավելվածի համաձայն:

### Հոդված 3

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ այդ տարածքում գործող բոլոր մատակարարներն ու միջնորդներն իրականացնեն սույն Հրահանգով սահմանված իրենց պարտականությունները:

#### Հոդված 4

1. Անդամ պետություններն ընդունում և հրապարակում են սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 1999 թվականի հունիսի 15-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին: Նրանք կիրառում են այդ դրույթները 1999 թվականի հուլիսի 1-ից:

Սակայն անդամ պետությունները թույլ են տալիս մինչև 2000 թվականի դեկտեմբերի 31-ը՝

–Արտադրատեսակների տեղադրումը շուկայում, վաճառքը և/կամ ցուցադրումը և

–92/75/ԵՏՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված արտադրատեսակի մասին գրքույկների և սույն Հրահանգի 2(4) հոդվածում նշված տպագիր նյութի տարածումը,

որոնք չեն համապատասխանում սույն Հրահանգին:

Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությունում նշված միջոցները, դրանք պարունակում են սույն Հրահանգին կատարվող հղում կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ազգային օրենսդրության դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

#### Հոդված 5

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց 20 օր հետո:

#### Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1998 թվականի հունվարի 27-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Քրիստոս ՊԱՊՈՒՏՍԻՍ

Հանձնաժողովի անդամ

(1) ᄠS L 297, 13.10.1992ᄠ., ᄠᄠ 16:

(2) ᄠS L 109, 26.4.1983ᄠ., ᄠᄠ 8:

(3) ᄠS L 32, 10.2.1996ᄠ., ᄠᄠ 31:

**ՊԻՏԱԿԸ**

**Պիտակի նախագծում**

1. Պիտակն ընտրվում է հետևյալ նկարագրողումներից՝ Երբ պիտակը չի տպագրվում փաթեթավորման վրա, այլ առանձին է տեղադրվում կամ կցվում փաթեթավորմանը, պետք է օգտագործվեն գունային տարբերակներ են: Եթե օգտագործվում է պիտակի «սպիտակի վրա սև» տարբերակը, տպագրումը և ֆոնը կարող են լինել ցանկացած գույնի, որը կպահպանի պիտակի ընթեռնելիությունը:

**ՀՂՈՒՄ ԳՐԱՖԻԿԱՅԻՆ**

2. Հետևյալ ծանոթագրությունները սահմանում են այն տեղեկատվությունը, որը պետք է ընդգրկել՝

Ծանոթագրություն.

I. Լամպի էներգաարդյունավետության աստիճանը, որը սահմանված է IV հավելվածի համաձայն: Այս ցուցանիշը պետք է նշվի համապատասխան սլաքի հետ նույն մակարդակի վրա:

II. Լամպի լուսային հոսքը լյումեններով արտահայտված, չափվում է 1(4) հոդվածում նշված ներդաշնակեցված չափորոշիչների փորձաստուգման ընթացակարգի համաձայն:

III. Լամպի մուտքային հզորություն (վատտ) լուսային հոսքը լյումեններով արտահայտված, չափվում է 1(4) հոդվածում նշված ներդաշնակեցված չափորոշիչների փորձաստուգման ընթացակարգի համաձայն:

IV. Լամպի շահագործման միջին ժամկետը՝ ժամերով արտահայտված, չափվում է 1(4) հոդվածում նշված ներդաշնակեցված չափորոշիչների փորձաստուգման ընթացակարգի համաձայն: Երբ լամպի շահագործման ժամկետի վերաբերյալ այլ տեղեկատվություն ներառված չէ փաթեթավորման վրա, սա կարող է բաց թողնվել:

3. Երբ II, III հավելվածներում և անհրաժեշտության դեպքում IV հավելվածի 2-րդ կետում նշված տեղեկատվությունը ներառված է լամպի փաթեթավորման այլ մասում, այն կարելի է պիտակից հանել, ինչպես նաև տուփը, որը պարունակում է այդ տեղեկատվությունը: 1.

Պիտակը ընտրվում է հետևյալ նկարագրողումներից՝

## ՀՂՈՒՄ ԳՐԱՖԻԿԱՅԻՆ

### Տպագրություն

4. Հետևյալ նկարագրությունը սահմանում է պիտակի որոշ առանձնահատկությունները՝

## ՀՂՈՒՄ ԳՐԱՖԻԿԱՅԻՆ

Պիտակը տեղադրվում է արտադրատեսակի ծայրում ազատ տեղի վրա առնվազն 5մմ, ինչպես ցույց է տրված: Եթե փաթեթավորման ծայրում չկա պիտակի չափերին համապատասխանող տարածք և նման ազատ տեղ կամ երբ այն կարող է ծածկել ամենամեծ կողմի մակերևույթի 50 %-ից ավելին, պիտակը և սահմանը կարող է փոքրացվել, այն չափով, որքանով անհրաժեշտ է, որ այս երկու պահանջները բավարարվեն: Սակայն ոչ մի դեպքում պիտակը չի կարող փոքրացվել իր ստանդարտ չափից 40 % պակաս (երկարությամբ): Երբ փաթեթավորումը չափազանց փոքր է, նման փոքրացված պիտակ տեղավորելու համար, պիտակը պետք է կցել լամպին կամ փաթեթավորմանը: Սակայն, երբ պիտակը ողջ չափով ցուցադրվում է լամպի հետ (օրինակ տեղադրված է այն դարակի վրա, որտեղ լամպն է ցուցադրված), ապա պիտակը կարելի է չկցել:

Օգտագործվող գույները

Գունային տարբերակ՝

CMYB- երկնագույն, ծիրանեգույն, դեղին, սև:

Օր.՝ 07X0:0 % երկնագույն, 70 % ծիրանեգույն, 100 % դեղին, 0 % սև:

Սլաք

Ա.X0X0

Բ.70X0

Գ.30X0

Դ.00X0

Ե.03X0

Զ.07X0

Է.0XX0

Գույնի համառոտ նկարագիր X070



Ողջ տեքստը սև է: Ֆոնը սպիտակ է:

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### **Մանրապատճեն**

Մանրապատճենը պարունակում է (1) պիտակի համար սահմանված տեղեկատվությունը:

(1) Երբ արտադրատեսակի վերաբերյալ գրքույկներ չեն տրամադրվում, արտադրատեսակի հետ տրվող պիտակը նույնպես կարող է համարվել մանրապատճեն:

### ՀԱՎԵԼՎԱԾ III

#### **Էլ. փոստով պատվեր կամ հեռավորության վրա այլ տեսակի վաճառք**

Էլ. փոստով պատվերների կատալոգները կամ 2(4) հոդվածում նշված այլ տպագիր նյութերը պետք է պարունակեն կամ պիտակի պատճենը կամ սահմանված կարգով ներկայացված հետևյալ տեղեկատվությունը:

1. Էներգաարդյունավետության մակարդակը (I Հավելված, Ծանոթագրություն I)

Արտահայտված որպես «Էներգաարդյունավետության մակարդակ երբ Ա-ից (ավելի արդյունավետ) –է (քիչ արդյունավետ) սանդղակի համաձայն»: Երբ այս տեղեկատվությունը տրամադրվում է աղյուսակում, այն կարող է ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ պարզ է, որ սանդղակը Ա-ից (ավելի արդյունավետ) է–ն (քիչ արդյունավետ) է:

2. Լամպի լուսային հոսք (Հավելված I, Ծանոթագրություն II)

3. Մուտքային հզորություն (Հավելված I, Ծանոթագրություն II)

4. 2. Լամպի շահագործման սահմանված միջին ժամկետը (Հավելված I, Ծանոթագրություն II)

Երբ լամպի շահագործման ժամկետի վերաբերյալ այլ տեղեկատվություն ներառված չէ կատալոգում, սա կարող է բաց թողնվել:

#### ՀԱՎԵԼՎԱԾ IV

Լամպի էներգաարդյունավետության մակարդակը սահմանվում է հետևյալ կերպ՝

Լամպերը դասակարգվում են A դասում, եթե

–Ֆլուորեսցենտային լամպեր են առանց համակցված բալաստի

(այն լամպերը, որոնք բալաստ են պահանջում և (կամ) հսկող մեխանիզմ, որը դրանք միացնում է հիմնական/մագիստրալային գծին)

$$W \leq 0,15 \sqrt{\ddot{O}} + 0,0097 \ddot{O}$$

– Այլ լամպեր

$$W \leq 0,24 \sqrt{\ddot{O}} + 0,0103 \ddot{O}$$

որտեղ  $\ddot{O}$ -ն լամպի ելքային լյումենն է

որտեղ W լամպում մուտքային հզորությունն է վատտով արտահայտված:

Եթե լամպը չի դասակարգվում Ա դասում, WR վատտերով հղումը հետևյալ կերպ է հաշվարկվում՝

$$WR = 0,88 \sqrt{\ddot{O}} + 0,049 \ddot{O}, \text{ երբ } \ddot{O} > 34 \text{ լյումեններ}$$

$$0,2 \ddot{O}, \text{ երբ } \ddot{O} \leq 34 \text{ լյումեններ}$$

որտեղ  $\ddot{O}$ -ն լամպի ելքային լյումենն է:

Էներգաարդյունավետության EI ցուցանիշն այնուհետև սահմանվում է հետևյալ կերպ՝

$$EI = \frac{W}{WR}$$

որտեղ W լամպում մուտքային հզորությունն է վատտով արտահայտված:

Էներգաարդյունավետության դասերն այնուհետև դասակարգվում են հետևյալ աղյուսակի համաձայն՝

#### ԱՂՅՈՒՍԱԿ